

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱՆՔՈՎ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԿԱՊ՝

Jenny Parnow, վաճառքի տնօրէն
Marshall Cavendish Publishers/Amazon Children's Publishing, USA
jparnow@amazon.com

ՀԱՅ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԵՆԷՆ ՆԵՐՇՆՉՈՒԱԾ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՆՈՐ ԳԻՐՔԻ ՄԸ ԴԱՍԵՐԸ՝ ԱՄԷՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Մարտ 2011ին, «Մարշալ Գեվընտիշ» հրատարակչատունը անգլիախօս ընթերցողի սեղանին կը դնէ հայկական հեքեաթ մը՝ ամերիկահայ գրագիտուհի Լուսին Գասպարեանի մշակումով ու մոսկուացի արուեստագիտուհի Մարիա Զայքինայի նկարազարդումով:

«Որկրամոլ ճնճողուկը. հայկական հեքեաթ մը» «*The Greedy Sparrow: An Armenian Tale*» կը պատկանի հայ հին բանաւոր աւանդութեան ու մշակոյթին, գրեթէ ջնջուած՝ 1915ի հայերու, ասորիներու եւ յոյներու դէմ Թուրքիոյ գործած ցեղասպանութեան ընթացքին: Հեղինակին հայրը՝ խմբագիր եւ հրատարակագիր Չարլզ Կարապետ Գասպարեանը (C. K. Garabed), հեքեաթը պատմած է գիշերները՝ քնանալու ժամուն: Իր կարգին, Չ. Գասպարեանը հեքեաթը սորված է իր մեծ մօրմէն, որ նշանաւոր հեքեաթասաց եղած է Երկրին մէջ: Հեքեաթը առաջին անգամ մշակած էր Յովհաննէս Թումանեանը անցեալ դարու սկզբնաւորութեան:

«Որկրամոլ ճնճողուկը» այս հեքեաթին անգլերէն առաջին ներկայացումն է՝ իբրեւ մանկական պատկերազարդ հատոր: Պատմումը կը սկսի հին օրերուն, երբ փուշ մը կը խոցէ ճնճողուկի մը ոտքը: Դէպքերու հետաքրքրական շղթայ մը կը յաջորդէ թոչունին օգնութեան խնդրանքին, զայն փոխադրելով հայկական գեղջուկ միջավայրը, ուր տոհմիկ ժողովուրդին կը հանդիպի: «Որկրամոլ ճնճողուկը»ի անսպասելի վերջաբանը բարոյական դասերը կը պարունակէ՝ փառասիրութեան, անձնասիրութեան ու անձնական դատողութեան մասին: Հեղինակին կայքէջը՝ www.lucinekasbarian.com, հեքեաթին բարոյական ու մարդկային բովանդակութեան քննարկումի եւ աշխատասիրութեան ուղեցոյց մը կը տրամադրէ:

“Sesame Street” հեռատեսիլի ծանօթ յայտագրի խօսնակ, հեքեաթասաց Պապ ՄաքԿրաթը կըսէ որ, թէ եւ հեքեաթը 4-էն 8 տարեկան ընթերցողներու ուղղուած է, «՝ Որկրամոլ ճնճողուկը ” ըստ էութեան բոլորին համար է: Խելացի ու զուարթ պատում մըն է, որուն հիանալի նկարազարդումները ոչ միայն գոյն կաւելցնեն, այլեւ ճշգրտօրէն կը մեկնաբանեն պատմողական գիծը»: Մոսկուացի նկարապատմող (animator) եւ նկարազարդող Մարիա Զայքինայի հայ բանահիւսակն աւանդութիւնները հարազատօրէն կը պատկերացնէ: Հեղինակն ու հրատարակիչը զայն որպէս

«Որկրամու ճնճողուկը»-ի նկարիչ ընտրած են՝ հայ բանահիւսութեան անոր նկարապատումները դիտելէ ետք YouTube-ի մէջ www.youtube.com/watch?v=QJ5NAXT9pLs&feature=player_embedded

Հեղինակը՝ Լ. Գասպարեանը, ազատ լրագրող մըն է արհեստով, որ ներկայիս «Փրոկրեսիվ Պուք»-ի գովազդային տնօրէնութիւնը կը վարէ (բացակայութեան թոյլտուութեամբ): Ան շրջանաւարտ է Նիւ Եորք համալսարանի լրագրութեան ճիւղէն եւ նախապէս եղած է «Ռէտ Ուիլ, Վայզըր եւ Գոնարի» հրատարակչատան գովազդային տնօրէնն ու «Հըրսթ Պուքս»-ի գովազդի եւ վաճառքի վարիչը: Տիկ. Գասպարեանը նաեւ հեղինակն է «Հայաստան՝ Հաստատուն Երկիր, Տոկուն Ժողովուրդ» (*Armenia: A Rugged Land, an Enduring People*, Dillon Press/Simon & Schuster, 1998) հատորին եւ աշխատակից խմբագիրը՝ «Գոպըլթթոն» ամսագրի ամերիկահայութեան նուիրուած յատուկ թիւին (Carus Publishing, 2000): Հայկական Յեղասպանութեան վերապրողներու թոռնուհին վարչական պաշտօններ վարած է Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան եւ Երկիր եւ Մշակոյթ Կազմակերպութեան մէջ: Այլ կազմակերպութիւններու շարքին, ան անդամ է Ազգային Գրողներու Միութեան, Մանկական Գիրքերու Գրողներու եւ Նկարազարդողներու Ընկերութեան եւ Կանացի Գիրքերու Ազգային Ընկերակցութեան:

Հեղինակն ու ամուսինը՝ լրագրող Տէյվիտ Պոյաճեանը, Պելմոնթ (Մասաչուսեթ) եւ Թինէք (Նիւ Ճըրզի) կը բնակին: Նկարազարդողը հեղինակը ընտրած է որպէս բնորդ՝ «Որկրամու ճնճողուկը»-ի հարսը ներկայացնելու համար: Գիրքին հարսանեկան տարազը հեղինակին սեփական հարսանեկան հագուստին շատ նման է:

«Որկրամու ճնճողուկը» 32 էջնոց լաթակազմ հատորը տրամադրելի կըլլայ Մարտ 2011ին՝ գրախանութներու եւ առցանց (online) գրավաճառներու, ինչպէս նաեւ հրատարակիչին միջոցաւ: Գինը 17.99 տոլար է ԱՄՆի եւ 20.95 տոլար՝ Գանատայի մէջ: Հրատարակիչէն ապսպրելու համար, հաճեցէք դիմել հետեւեալ անձին ու հասցէին՝ Darci Swanson, Representative, Brilliance Customer Service Audio, 1704 Eaton Drive, P.O. Box 887, Grand Haven, MI 49417, USA; հեռաձայն՝ 1 (800) 648-2312 x713; dswanson@brillianceaudio.com.

Թարգմ. Վարդան Մատթէոսեան

#

The Greedy Sparrow: An Armenian Tale,

Վերապատում՝ Lucine Kasbarian «նկարազարդում՝ Maria Zaikina

Հրատարակիչ՝ Marshall Cavendish Children; **Հրատարակութեան թուական՝** Մարտ 2011

ISBN - 13: 978-0-7614-5821-0; **LOC:** 2010018172;

Տեսակ՝ Առեւտրական ամուր լաթակազմ մանկական նկարազարդ հատոր – ժողովրդական հեքեաթ

Նկարազարդութիւն՝ ճնճողուկ մը օտարականներէ բարիք կը տեսնէ եւ իւրաքանչիւր բարի շարժումի դիմաց աւելիին կը ձգտի, բայց ի վերջոյ իր սկզբնական վիճակի կը մատնուի

Գին՝ \$17.99 ԱՄՆի մէջ, \$20.95 Գանատայի մէջ

Ապսպրանքի համար՝ Marshall Cavendish Children's Books/Amazon Children's Books,

<http://www.amazon.com/The-Greedy-Sparrow-Armenian-Tale/dp/0761458212>

Հեղինակի կայքէջ՝ www.lucinekasbarian.com